

տեղից միատիցիդ մի սոցիալական էութեան տեսակէտից ամենահետաքրքրական դրութիւններից մէկն է երեան գալիս: Պոէմի ընթացքում, բանաստեղծը մի շարք խորհրդածութիւններով այն գաղափարն է զարգացնում, որ իր «Ողբերգութեան Մատեան»-ում ամեն մի ընթերցող կարող է ձգտել և հասնել այն բանին, ինչին որ ինքն է ձգտում և հնարաւոր է համարում հասնել, որովհետեւ իր երգած այդ ողբերի մէջ ինքը, իրեն մեծապէս զիտակ բոլոր վշտերի, իր սեփական պատկերով արտացոլում է աշխարհի բոլոր կողմերում ապրող քրիստոնեայ մարդկանց պատահած վշտերը՝ խորութիւն չզննելով երեխաներից մինչև ծերունիներին, սամիկներից մինչև ազնուականներին միջև: Մարդիկ առանց տարիքի ու դասակարգի խտրութեան՝ այս պատճառով կարող են իր գրքով միշտ ներկայանալ Աստծու գլխութեան: Բանաստեղծը խնդրում է Աստծուց, որ յստակ սրտով իր Մատեանը կարդացողներին հոգիները բժշկի և մեղքերը սրբի. և եթէ ոեւէ մէկը այդպիսով արժանանալ փրկութեան, թող ինքն էլ նրա հետ միասին փրկուի. եթէ իր գրքի խօսքերի ներգործութիւնից ոեւէ մէկի սրտի խորքերից աստուածահաճոյ հեծեծանքներ դուրս գան, թող նրա հետ ինքն էլ օգտուի դրանից:

Այսպիսով՝ Նարեկացին իր և ընթերցողի միջև ձգտում է ստեղծել անխզելի կապ: Նրա պատկերացմամբ՝ ընթերցողները կարող են հոգու փրկութեան և անդորրութեան հասնել, ամէն տեսակ տանջանքներից և վշտերից ազատուել շնորհիւ իրեն, իսկ ինքը կարող է այդ բոլորին հասնել նաև շնորհիւ իր ընթերցողներին: Եւ որպէս զի իր Մատեանը այս կրկնակի նպատակներին ծառայի, Նարեկացին խնդրում է Աստծուց իր աներգործող ջունչը՝ միացնել այդ ստեղծագործութեանը:

(Շարունակելի՜ 7)

Մ. ՄԿՐԵԱՆ



ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ԶԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1928 Յուլիս 22, Կիրակի առաւ, Պայծառ. կերպութեան տեսին լուսեղէն յիշատակներուն մէջ, Ս. Պատրիարք Հայրը(*) կատարեց Զեռնագրութեան խորհուրդը:

Խուռն բաղմութիւնը հետաքրքիր և աղօթաւոր, կը հրճուէ՝ դիտելով սրբազան խորհուրդը, երբ երկու նախնականներ ծառիկ վրայ, երեսնին, դէպի ժողովուրդը, իրենց երկու ձեռքերը վեր, բաց ձեռքեր, «Աստուածային և երկնային շնորհ» երգով, արժանիքի, նուիրումի, վկայութեան այդ հոգեյոյզ երգով, որ ընծայեալին և ժողովուրդին միաշունչ վկայութեան եռահիսակ երգարանութիւնն է, կոչուեցան քահանայութեան սուրբ պաշտօնին:

Սրբազնագործ Զեռնագրիչը իր աղօթքով և Զեռնագրութեամբ քահանայացուց ընծայեալները և օրհնելով սնունց քահանայական պատմութեանը, կերտեց սուրբ պաշտօնին արտաքին վայելուչ ձեւերն ալ. և կարգաց վերջին աղօթքն օրհնութեան, Նարեկացուին «Աղաչեմ՝ զանկոփովսկի ճէրտիւնը» և աղօթքն ետքը զպրաց դասը՝ զոռաց առաջին «Նորիւնդ խորիւնը» նորընծաներուն զգետաւորման:

Ս. Պատրիարք Հայրը իր քարոզը վերջացնելէ ետքը, «Առաւելոյ Աղաւնոյ» շարականին թրթիւններուն մէջ, որբալոյս միւռնոսով օծեց նորընծաներուն ճակատները ինչպէս նաև անոնց աջ ու ահեակ ձեռքերը, պահելով առաջինին անունը և կոչելով զայն Տէր ՆՈՐԱՅ (կուսակրօն) Քանանայ, իսկ երրորդին անունը փոխեց և կոչեց Տէր Տիրան (կուսակրօն) Քանանայ, որոնք իրենց օծեալ ձեռքերով իրենց առաջին նաղապարհները տուին ժողովուրդին, և երբ Սարկազուրիւնը տուին ժողովուրդին, «Աղջոյն աւու միմեանց», Ս. Պատրիարքէն սկսեալ բոլոր եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և սարկազուներ համբարեցին նորընծաներուն օծեալ ճակատներն ու ձեռքերը, և պաշտամունքներու աւարտումէն ետքն ալ ժողովուրդը զիմեց ողջունելու նորընծաները, համբարելով անոնց միւռնոսարոյր ձեռքերը:

Երանի՜ թէ այս թարմ օծութեամբ փայլէր նորընծաներու կեանքը մինչև վերջը:

Կիրակի երեկոյ, ժամերգութեան աւարտումէն ետքը, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց նորընծաներուն վերաբերեալ Օրհնութիւնը, և կրօնաւորութեան այդ հայացի, վայելչածէ կնիւղները դրաւ անոնց գլուխը, և կոչեց զանունը Տ. Նորայր Արեղայ և Տ. Տիրան Արեղայ:

(Սիւն, 1928 Օգոստ. - Սեպտ., էջ 280 - 282):

(*) Դարեան եղիւ Պատրիարք: